

Թագաւորն, թէ ի՞նչիսի կարացար զիմ
առիւծն սպանել: Եւ ասաց մայրն, թէ
Գինով եմ սնուցեր. և ասաց զպատ.
ճառն: Եւ հրաման
արար Թագաւորն,
թէ Այգի անկեցէք.
ապա զգինին հէնց
խմեցէք՝ որ զա-
ռիւծն սպաննէք.
չիխմէք հէնց՝ ինչ
իմ որդին եղաւ:

ԻԻԿԱՐ

ՄՐՋՆԱԿԵՐ ԱՐՋԸ


Այս կենդանւոյս
շատ անյարմար կու
զայ արջ անունը
տալ, որովհետեւ ա-
նուտամն¹ ըսուած
կենդանեացդասուն
կը վերաբերի. սա-
կայն Գերմանիա ա-
սանկ անուն տուած
են ասոր:

Անատամն ըսուած
կենդանեաց դասն
շատ զարմանալի ու
կերպ կերպ է: Ըստ
մեծի մասին Պրա-
զիլ կը բնակին. և
լայնառնգունը կապ-
կաց հետ՝ այն եր-
կրին կենդանեաց
զլիաւոր յատկու-
թիւնը ներկայացը-
նող կենդանիք են:

Եւ յիրաւի, յամ-
րագնացը, թաթուն

¹ Անատամնուից անոր
համար կ'ըսուին որով-
հետեւ կամ ըստ մասին
և կամ բոլորովին զուրկ
են ափսոսեղէն անատամնուից
շատ մեծահասակ կենդանիք էին. ինչպէս էին մե-
ծագազանը (Mégathérium) և տտամնապէղը
(glyptodonte):

և մրջնակեր արջը, այն կոյս անտառ-
ներուն բնակիչն են, որ Ամազունեաց
և Օրենոք զետեւրուն երկու կողմէն, շատ



Մ Ր Ջ Ն Ա

մը հարիւրաւոր քառակուսի մղոն մի-
ջոց գրաւած են: Եւ այս կարգի կենդա-
նիներէ, որչափ ծանօթ է մեզի ցայսօր,

միայն թեփաւորն Մանիտ և թաման-
տուան՝ (որ նաև մրջնակերի տեսակ մըն
է) Բարեկուսոյ Գլխուն կենդանիքը՝ հին

թաթուն կամ Արմատիլը երբեմն
ողջ ալ Եւրոպա բերուած է, անանկ որ
հազուադիւտ բան մը չսեպուիր հիմա,



ինչպէս կը համա-
րուի մեր մրջնակեր
արջը, որ առջի ան-
գամ համպուրկ քա-
ղաքը տարուեցաւ,
նոյն քաղքին կեն-
դանաբանական ըն-
կերութեան ար-
դեամբքը: Ժողովուր-
դը խուռն կ'ընթա-
նար այդ նորագիւտ
հիւրը տեսնելու. ա-
մենը ականատես ը-
լալ կ'ուզէին այդ
նորածն, երկայնա-
ղլուխ, կարճ վզով,
երկայնացուկ երե-
սով կենդանւոյն, ու
բուն լեզուն երկու
ոտնաչափ երկայ-
նութեամբ ցրուին
մէջ ծալուած է:
Այս լեզուն՝ իր կե-
րակուրը հողալու կը
գործածէ. մրջնաբոյ-
նեբու մէջ կ'երկնցը-
նէ զայն, որ կաշուն
ըլլալով միջատները
միան կը կաշին, ու
կենդանին շուտ մը
գուրս քաշելով կ'ու-
տէ: Սրունքները ա-
մենակարճ են, պոչը
երկայն և առատ
ու խիտ մազերով
ծածկած. մորթին
գոյնը թուի է. քա-
լուածքը ծանր և
զանգաղ, ոյլ իրենց
հայրենիքը այս կեն-
դանիք լողալով մեծ
դետերը կ'անցնին.

աշխարհին մէջ դեռ ևս կը բնակին. առ-
ջինը հարաւային Ափրիկոյ մէջ կը գրա-
նուի. երկրորդը արևելեան Հնդկաց մէջ:

բնաւորութիւնը բնտանի է, և ով որ
քովը կը մօտենայ՝ ցուկը անոր կը մօ-
տեցզընէ ու թոյլ կու տայ որ զինքը

գունեն . այլ շատ գրգռելու չիզար, վասն զի անանկ երկայն ըղունգներ ունի, որ ցետելով մեծ վէրքեր կը բանայ :

Արժան է ըսենք որ Համպուրկի մըրջ նակերը կլիման փոխած ըլլալով ճաշակն ալ փոխած է, կամ թէ Եւրոպայի մըրջ ջիւնները իր ախորժին յարմար չեն գար, վասն զի որչափ տեսակ մըջիւն ալ անոր առջին գրեր են, և ոչ մէկուն մօտեցուցեր է լեզուն :

ՀԱՅՔ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԻՈՅ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ԱՅԵԼ ՀՈՄԵՐ ՏԸ ՀԵԼ
ԳԱՂՂԻԱՅԻ ՏԻԿՆՈՋ

Քսաւիէ Հոմէր տը-Հէլ (Hommaire de Hell) գաղղիացի երկրագէտ ճարտարապետն ասկէ 30 տարի առաջ ճամբորդութիւն մ'ըրած է Կազբիական ծովուն եզերքները, 'ի Կովկաս, 'ի Ղրիմ և 'ի Հարաւային Ռուսաստան, երկրաբանական և ուսումնական քննողութեամբ, զոր հրատարակելով նկարագրութեւ և պատկերներով, 1844ին Գաղղիոյ աշխարհագրական ընկերութեան մեծ մրցանակ վարձքն ընդունել է : Յետոյ ուրիշ ճամբորդութիւն մ'ալ ըրած է (1846-1848) յՕսմանաստան և 'ի Պարսկաստան, զոր չլրացուցած մեռել է, և այս երկրորդ պատուական ու թանկ գործն ալ յետոյ տպագրուած է : Իր առջի ճամբորդութեան ատեն ալ իրեն ուղէկից եղած է իր երիտասարդ և արիասիրտ կիներ՝ Ատել կամ Ատելա, յիտ, որ և գործոյն նկարագրական մասն զրած է ընտիր և բնական ոճով մը . որով ինչպէս էրկանը աշխատանաց՝ այնպէս ալ փառացը մասնակից եղած է . և աշխարհագիտաց ընկերութեան ընկեր գրուած է : Եւ զի այն հմուտ և գեղեցիկ գործն բազմահատոր և բազմաժախ ըլլալով շատերու մօտենալի չէր, յետ 25 տարիներու՝ այրի տիկինն (յաւի 1868) նորէն հրատարակեց այն ճամբորդութեան նկարագրական մասը, յորդորուելով 'ի բարեկամաց, և անուա-

նելով Les Steppes de la Mer Caspienne, voyage dans la Russie meridionale. փոքր հատորիկ մ'է 364 երես, հաճոյ կարդալու . որոյ մէջ քանի մը տեղ կը յիշէ մեր ազգը կամ ազգայինները, և զլիաւորապէս Նոր Նախիջևանի և Աթտէրխանի վրայ խօսած ատեն . ահա այս ետքիներուս վրայ գրածը կը թարգմանենք :

« Մէկ մ'ալ կը տեսնես որ առջեկ կը կանգնի (Նոր) Նախիջևան, ճերմակ քաղաքն Հայոց . զարմացած ճանապարհորդն նորէն կը գտնէ զԱրևելք՝ անոր մեծամեծ վաճառատեղաց մէջ, որոնց ապակեաց արևէն փողփողիլը կը նըշմարէ, տանց քմահաճոյ ճարտարապետութեան մէջ, և մանաւանդ ասիական գեղեցիկ դիմաց վրայ՝ որոնց կը պատահի յառաջ երթալով : Այս արևելեան քաղաքին բոլոր թաղերն ու վաճառատեղիները չըլեցանք, այն յօժարութեամբ զոր Կոստանդնուպօլսի յիշատակներէն առած էինք : Երբ տեսանք քաղաքեալ կանանց կարմիր հողաթափին աննմանելի անհողութեամբ մը քսկոտելը, հայկական բարձրաբերձ խոյրերը, երկայն սպիտակ մօրուքները, հաշուէսեղանոց վրայ կըկզած վաճառականները, բոլոր Ասիոյ բերքերով լցեալ վաճառանոցները, կարծեցինք թէ իրաւցընէ Ստամպօլի վաճառական թաղից մէկուն մէջն եմք : Կրպակներն յարդարեալ են շատ տեսակ առարկայիւր, որ մեզի շատ հետաքրքրական երևցան : Հայք աւելի գերազանց են արծաթի բանուածքներու, և փափուկ ասղնէգործութեամբք պատելու կարմիր ու դեղին կաշիներ, որ թամբաց, հողաթափից, կօշկաց, և այլն, չինելու կը ծառայեն : Կովկասի իշխանաւորաց համար շինուած ամենագեղեցիկ թամբեր ցուցին մեզի . որոնցմէ մէկը կապուտակ թաւիչէ, արծաթեայ թիթեղօք պաճուճեալ, սեւ կիտուածով, ձոյլ արծաթէ ասպանդակներով, և զարդափայլ սանձով, մատաղ եգերացի իշխանուհւոյ մը համար ապսպրուած էր : Ամեն տեսակ վա-